



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 30-Ի «ԴԱՏԱՎՈՐԻ ՊԱՇՏՈՆՈՒՄ ՆՇԱՆԱԿՄԱՆԸ ԽՈԶԸՆԴՈՏՈՂ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՐԱՏՆԵՐԻ ԵՎ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿԸ, ԴԱՏԱՎՈՐԻ ՊԱՇՏՈՆՈՒՄ ՆՇԱՆԱԿՄԱՆԸ ԽՈԶԸՆԴՈՏՈՂ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՐԱՏՆԵՐԻ ԵՎ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՏԵՂԵԿԱՆՔԻ ՁԵՎԸ, ԴԱՏԱՎՈՐԻ ՊԱՇՏՈՆՈՒՄ ՆՇԱՆԱԿՄԱՆԸ ԽՈԶԸՆԴՈՏՈՂ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՐԱՏՆԵՐԻ ԵՎ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՆՔ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2007 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 11-Ի N 1184-Ն ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԹԻՎ 685-Ն ՈՐՈՇՄԱՆ ՀԱՎԵԼՎԱԾ N 1-Ի 15 ԵՎ 16-ՐԴ ԿԵՏԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան

16 սեպտեմբերի 2025թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով.

նախագահող՝
դատավորներ՝

Արման Դիլանյանի,
Արտակ Զեյնալյանի,
Հրայր Թովմայանի,
Դավիթ Խաչատուրյանի,
Երվանդ Խունդկարյանի,
Հովակիմ Հովակիմյանի,
Սեդա Սաֆարյանի (զեկուցող),
Արթուր Վաղարշյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝
դիմողի՝ Մարդու իրավունքների պաշտպանի,
պատասխանողի՝ Կառավարության,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետի, 169-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետի, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 22 և 68-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի դիմումի հիման վրա՝ ՀՀ կառավարության 2019 թվականի մայիսի 30-ի «Դատավորի պաշտոնում նշանակմանը խոչընդոտող ֆիզիկական արատների և հիվանդությունների ցանկը, դատավորի պաշտոնում նշանակմանը խոչընդոտող ֆիզիկական արատների և հիվանդությունների բացակայության մասին տրամադրվող տեղեկանքի ձևը, դատավորի պաշտոնում նշանակմանը խոչընդոտող ֆիզիկական արատների և հիվանդությունների բացակայության մասին տեղեկանք տրամադրելու կարգը սահմանելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի հոկտեմբերի 11-ի N 1184-Ն որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 685-Ն որոշման Հավելված N 1-ի 15 և 16-րդ կետերի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

«Դատավորի պաշտոնում նշանակմանը խոչընդոտող ֆիզիկական արատների և հիվանդությունների ցանկը, դատավորի պաշտոնում նշանակմանը խոչընդոտող ֆիզիկական արատների և հիվանդությունների բացակայության մասին տրամադրվող տեղեկանքի ձևը, դատավորի պաշտոնում նշանակմանը խոչընդոտող ֆիզիկական արատների և հիվանդությունների բացակայության մասին տեղեկանք տրամադրելու կարգը սահմանելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի հոկտեմբերի 11-ի N 1184-Ն որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 685-Ն որոշումը (այսուհետ նաև՝ Որոշում) Կառավարության կողմից ընդունվել է 2019 թվականի մայիսի 30-ին, վարչապետի կողմից ստորագրվել՝ 2019 թվականի հունիսի 5-ին և ուժի մեջ է մտել 2019 թվականի հունիսի 13-ին:

Որոշման N 1 հավելվածով սահմանված «Դատավորի պաշտոնում նշանակմանը, նշանակվելուց հետո պաշտոնավարմանը խոչընդոտող հիվանդությունների և վիճակների» ցանկի 15-րդ կետը սահմանում է. «Երկու ականջի կայուն լրիվ խլություն կամ խուլիամրություն (H91)»:

Ցանկի 16-րդ կետը սահմանում է. «Երկու աչքերի (քինոկուլյար) կուրություն (H54.0)»:

Գործի քննության առիթը Մարդու իրավունքների պաշտպանի՝ 2024 թվականի սեպտեմբերի 27-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Սահմանադրական դատարանի 2025 թվականի մարտի 11-ի ՍԴԱՌ-34 աշխատակարգային որոշմամբ գործի վարույթը կասեցվել է:

Սահմանադրական դատարանի 2025 թվականի ապրիլի 29-ի ՍԴԱՌ-70 աշխատակարգային որոշմամբ գործով զեկուցողը փոխվել է. Սահմանադրական դատարանի դատավոր Վ. Գրիգորյանի փոխարեն զեկուցող է նշանակվել Սահմանադրական դատարանի դատավոր Ս. Սաֆարյանը:

2025 թվականի ապրիլի 8-ին Սահմանադրական դատարան են մուտքագրվել Առողջապահության նախարար Անահիտ Ավանեսյանի՝ գործով զեկուցողի 27.03.2025 թ. ՍԴԴ-24 գրությամբ պահանջված հիմնավորումները:

Սահմանադրական դատարանի 2025 թվականի հուլիսի 3-ի ՍԴԱՌ-106 աշխատակարգային որոշմամբ գործի վարույթը վերսկսվել է:

Ուսումնասիրելով դիմումը, պատասխանողի գրավոր բացատրությունը, գործում առկա մյուս փաստաթղթերը և վերլուծելով Որոշման Հավելված N 1-ի վիճարկվող իրավադրույթները՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց** .

1. Դիմողի դիրքորոշումները

1. Մարդու իրավունքների պաշտպանը (այսուհետ նաև՝ Դիմող), վկայակոչելով Սահմանադրության, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի (այսուհետ նաև՝ Օրենսգիրք), «Հանրային ծառայության մասին» օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք), «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ նաև՝ ՄԻԵԿ), «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» միջազգային դաշնագրի (այսուհետ նաև՝ Դաշնագիր) և վերջինիս ընդհանուր մեկնաբանությունների, «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» կոնվենցիայի և վերջինիս ընդհանուր մեկնաբանությունների վերաբերելի դրույթները, Սահմանադրական դատարանի և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ նաև՝ Եվրոպական դատարան) համապատասխան որոշումները, գտնում է, որ հնարավոր է սահմանել որոշակի հիմքեր, որոնք կարող են նախապայման լինել դատավորի պաշտոնում նշանակվելու համար, սակայն այդ

պաշտոնում նշանակմանը խոչընդոտող կարգավորումները, ի թիվս այլնի, պետք է ներառեն նաև խտրականության արգելքը և չպետք է նախատեսեն աշխատանքի սահմանափակ հասանելիություն՝ կապված հաշմանդամություն ունենալու հետ:

2. Դիմողի պնդմամբ՝ ակնհայտ է, որ պետությունը, Սահմանադրությամբ ամրագրելով հանրային ծառայության անցնելու իրավունքն ու խտրականության արգելքը՝ որպես սկզբունք, իր առջև դրել է պարտականություն՝ երաշխավորել յուրաքանչյուր քաղաքացու, այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող քաղաքացու՝ այլ քաղաքացիների հետ հավասար հիմունքներով հանրային ծառայության անցնելու համար հնարավորությունների ապահովումը, ինչն էլ, իր հերթին, միջազգային իրավական փաստաթղթերով նախատեսված պարտավորությունների համատեքստում ևս ենթադրում է արժանիքների հիման վրա սեփական մասնագիտական և այլ ընդունակություններն ազատ դրսևորելու նպատակով համապատասխան քաղաքականության, օրենսդրական և այլ կառուցակարգերի, այդ թվում՝ խելամիտ հարմարեցումների ապահովում:

3. Ելնելով վերոգրյալից՝ Դիմողը գտնում է, որ Որոշման N 1 հավելվածի 15 և 16-րդ կետերն այնքանով, որքանով սահմանում են բացարձակ արգելք երկու ականջի կայուն լրիվ խլություն կամ խուլիամրություն և երկու աչքերի (բինոկուլյար) կուրություն ունեցող անձանց՝ դատավորի պաշտոնում նշանակվելու համար, հակասում են Սահմանադրության 29, 49 և 81-րդ հոդվածներին:

2. Պատասխանողի դիրքորոշումները

4. Կառավարությունը (այսուհետ նաև՝ Պատասխանող) արձանագրում է, որ Սահմանադրության 29-րդ հոդվածով սահմանված են այն հիմքերը, որոնցով տարբերակված մոտեցում ցուցաբերելն արգելվում է: Նշյալ հիմքերը, ըստ Պատասխանողի, ունեն հստակ և որոշակի բովանդակություն՝ բացառությամբ «անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներ» ձևակերպման, որը, ի տարբերություն Սահմանադրության նույն հոդվածով պաշտպանվող մյուս հիմքերի, ոչ սպառիչ ցանկ է նախատեսում: Այնուամենայնիվ, թեպետ «անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներ» ձևակերպումը խտրականության արգելքով պաշտպանվող ոչ սպառիչ ցանկ է նախատեսում, այն խիստ որոշակիորեն սահմանում է այդ ցանկով հնարավոր հիմքերի բնույթը, որոնք պետք է լինեն «անձնական» կամ «սոցիալական»:

5. Պատասխանողը փաստում է, որ խտրականության դրսևորում արձանագրելու տեսանկյունից հավասար պայմաններում միևնույն կատեգորիայի անձանց շրջանակում ցանկացած տարբերակման դրսևորման առկայությունը դեռևս բավարար չէ այն որպես խտրականություն դիտարկելու համար: Ըստ Պատասխանողի՝ այդ տեսանկյունից կողմնորոշիչ պետք է լինի օբյեկտիվ հիմքի և իրավաչափ նպատակի առկայությունը կամ բացակայությունը: Խտրականության արգելքի սկզբունքի խախտում է այն տարբերակված մոտեցումը, որը պատճառաբանված չէ օբյեկտիվ հիմքով և չի հետապնդում իրավաչափ նպատակ:

6. Պատասխանողը նշում է, որ Սահմանադրության 49-րդ հոդվածում օգտագործվող «ընդհանուր հիմունքներով» եզրույթը դեռ չի նշանակում, որ նվազագույն չափանիշներին համապատասխանող անձը կարող է նշանակվել դատավորի պաշտոնում՝ անտեսելով նշանակմանը խոչընդոտող արգելքները: Ըստ Պատասխանողի՝ նույն հոդվածում նշված «Մանրամասները սահմանվում են օրենքով:» նախադասությունն ինքնանպատակ չի սահմանվել, ինչից ակնհայտորեն բխում է, որ թեև Սահմանադրությամբ երաշխավորվում է յուրաքանչյուր քաղաքացու՝ հանրային ծառայության անցնելու իրավունքն ընդհանուր հիմունքներով, իսկ հիմնական չափանիշները, ներկայացվող պահանջները, այդ թվում՝ ծառայության անցնելու արգելքները սահմանվում են օրենքով:

7. Վկայակոչելով Սահմանադրական դատարանի պրակտիկան՝ Պատասխանողը նշում է, որ խտրականության առկայության գնահատման համար անհրաժեշտ է փաստել նույն կարգավիճակում գտնվող անձանց նկատմամբ այնպիսի տարբերակված մոտեցումը, որը չունի ողջամիտ արդարացում և չի հետապնդում իրավաչափ նպատակ, միևնույն ժամանակ, այդ մոտեցման արդյունքում տեղի է ունենում անձի իրավունքների սահմանափակում կամ զրկում, կամ որևէ մեկին տրվում է առավելություն մյուսի նկատմամբ:

8. Պատասխանողը նշում է նաև, որ թեև հաշմանդամության իրավունքների շուրջ քննարկումների մեծ մասը կենտրոնացած է ներառման, արդարադատության մատչելիության և ողջամիտ հարմարեցումների անհրաժեշտության վրա, առկա չէ Եվրոպական դատարանի առանձին որոշում կամ դիրքորոշում որևէ միջազգային մարմնի կողմից, որն ուղղակիորեն վերաբերում է հենց երկու ականջի կայուն լրիվ խլություն, երկու աչքերի (բինոկուլյար) կուրություն ունեցող անձանց դատավոր նշանակելու իրավաչափությանը կամ անհրաժեշտությանը: Միջազգային կառույցները, թեև ընդգծում են մասնակցության

և ներառականության կարևորությունը կյանքի բոլոր ոլորտներում, ներառյալ՝ հանրային ծառայության պաշտոններում, այնուամենայնիվ նաև ընդունում են, որ անձինք պետք է հնարավորություն ունենան կատարելու իրենց վերապահված դերերից բխող հիմնական գործառույթները: Այլ կերպ՝ թեև կարևորություն է տրվում ներառականության սկզբունքին, նման հաշմանդամություն ունեցող անձին դատավորի պաշտոնում նշանակելու իրագործելիությունն առավելապես պետք է կախված լինի այդ պաշտոնից բխող գործառույթներն արդյունավետ կատարելու նրա կարողությունից:

9. Պատասխանողը գտնում է, որ քննարկվող հարցը հարկ է առանձին քննարկման առարկա դարձնել նաև դատական պաշտպանությունից օգտված՝ դատարան դիմած անձանց արդար դատաքննության իրավունքի պատշաճ ապահովման կարևորության համատեքստում առ այն, որ երկու ականջի կայուն լրիվ խլություն, երկու աչքերի (բինոկուլյար) կուրություն ունեցող անձանց կողմից դատավորի պաշտոնում նշանակվելը կարող է հանգեցնել արդար դատաքննության իրավունքի խախտման: Մասնավորապես՝ հարցը պետք է դիտարկել նաև արդար դատաքննության մատչելիության համատեքստում:

10. Ըստ Պատասխանողի՝ դատավորի աշխատանքը պահանջում է մի շարք հմտություններ, այդ թվում՝ վկայություններ լսելը, փաստերի վերլուծությունը և կողմերի միջև երկխոսություն հաստատելը: Դատավորի մոտ քննարկվող հիվանդությունների առկայությունը կարող է խոչընդոտել սույն գործընթացին, որը կարող է հանգեցնել դատական քննության, արդարադատության իրականացման որակի անկման:

11. Նշյալ պայմաններում դատավորի կողմից գործի քննության իրականացումը կարող է առաջացնել նաև երկխոսության բարդություններ. վերջինս չի կարողանա լիարժեք լսել կողմերի դիրքորոշումները, փաստերի ներկայացումը, վկաների ցուցմունքները, որը խնդրահարույց է փաստերի ճիշտ ընկալման, մեկնաբանության, ներքին համոզմունք ձևավորելու տեսանկյունից, ինչն էլ, իր հերթին, շատ հաճախ կարող է հանգեցնել արդարադատության ոչ պատշաճ իրականացման:

12. Նշվածը նաև խնդրահարույց է դատավարության մասնակիցների կողմից փոխանցվող տեղեկատվության ընկալման տեսանկյունից, քանի որ դատական նիստերի ընթացքում հայցի կամ առարկությունների հիմքում դրվող փաստերը դատավորի կողմից պետք է լիովին ընկալվեն: Երկու աչքերի կուրությունը կարող է, օրինակ՝ խոչընդոտել դատավորի կողմից փաստերը հավաստող փաստաթղթերի, ապացույցների ինքնուրույն

վերլուծությունը, ինչը կարող է հանգեցնել ներքին համոզմունքի սխալ ձևավորման, գործի փաստերից չբխող վճիռների, դատավճիռների, որոշումների կայացման:

13. Քննարկվող հիվանդությունները կարող են նպաստել նաև ուշացած որոշումների կայացման, դատավարական ժամկետների չպահպանման: Այսինքն՝ ըստ Պատասխանողի՝ դատական ընթացակարգի արդյունավետությունը կարող է խաթարվել:

14. Պատասխանողը գտնում է նաև, որ քննարկվող հիվանդություններն ունեցող դատավորների պաշտոնավարումը կարող է դիտվել որպես միջազգային փաստաթղթերով սահմանված դատական իշխանության անկախության, իրավունքի գերակայության և դատավորին ներկայացվող չափանիշների խախտում:

15. Ամփոփելով՝ Պատասխանողը գտնում է, որ Հավելվածի 15 և 16-րդ կետերը համապատասխանում են ՀՀ Սահմանադրությանը:

3. Սահմանադրական դատարանի կողմից պարզման ենթակա հանգամանքները

16. Սույն սահմանադրաիրավական վեճի շրջանակներում Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում պատասխանել հետևյալ հարցադրումներին.

- ո՞րն է հանրային ծառայության անցնելու հավակնորդին առաջադրվող օրենսդրական պահանջների սահմանադրաիրավական նշանակությունը,
- արդյո՞ք Կառավարության 2019 թվականի մայիսի 30-ի թիվ 685-Ն որոշման Հավելված N 1-ի 15 և 16-րդ կետերով սահմանված առողջական խնդիրներ ունեցող անձի՝ դատավոր նշանակվելու բացարձակ արգելքի սահմանումն այն պայմաններում, երբ առկա է դատավոր նշանակվելու մնացյալ պահանջներին համապատասխանություն, համահունչ է Սահմանադրության 49-րդ հոդվածով նախատեսված հանրային ծառայության անցնելու իրավունքին:

4. Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումները

17. Հանրային ծառայությունը պետության սահմանադրական գործառույթների իրականացմանն ուղղված համակարգ է, որն ապահովում է Սահմանադրության 1-3-րդ անփոփոխ հոդվածների կենսագործումը:

18. Հանրային ծառայության ինստիտուտը և վերջինիս ձևավորմանն ու գործունեությանը նպատակաուղղված հանրային ծառայության անցնելու իրավունքը համակցում են

Սահմանադրության 2-րդ անփոփոխ հոդվածով սահմանված ժողովրդաիշխանության սկզբունքը, ներառյալ՝ յուրաքանչյուր քաղաքացու՝ պետական կառավարմանը մասնակցելու իրավունքը, Սահմանադրության 57-րդ հոդվածի 1-ին մասում տեղ գտած աշխատանքի ազատ ընտրության իրավունքի հետ՝ այդպիսով ապահովելով նշյալ սահմանադրական արժեքների համաժամանակյա իրացում և պաշտպանություն:

19. Սահմանադրական դատարանն իր որոշումներում անդրադարձել է հանրային ծառայության ինստիտուտի իրավակառուցակարգային տարբեր հայեցակետերի՝ սահմանելով հանրային ծառայության սահմանադրական ինստիտուտի և հանրային ծառայության անցնելու սահմանադրական իրավունքի հետևյալ բովանդակային հիմնադրույթները.

«Հանրային ծառայության անցնելու իրավունքը՝ որպես ժողովրդավարական իշխանության իրացման յուրօրինակ դրսևորում, մի կողմից՝ իրավական և ժողովրդավարական պետության քաղաքացու՝ պետական կառավարման ոլորտում հանրային ծառայության՝ օրենքով նախատեսված կարգով և պայմաններով անցնելու հնարավորության ապահովման երաշխիք է: Մյուս կողմից՝ հանրային ծառայության անցնելու իրավունքի իրացմամբ Հայաստանի Հանրապետության քաղաքացին ոչ միայն մասնակցում է օրենքով նախանշված կարգով և պայմաններով հանրային իշխանության մարմինների քաղաքականության իրականացմանը, այլև հնարավորություն է ունենում հանրային ծառայության ոլորտում ծավալել աշխատանքային գործունեություն՝ իր մասնագիտական գիտելիքներին և կարողություններին համապատասխան:

(...)

(...) հանրային ծառայության անցնելու՝ քաղաքացու իրավունքի իրականացման ոլորտը՝ հանրային ծառայության ընդհանուր համակարգը, դրա տարբեր բաղադրիչների առանձնահատկություններով պայմանավորված տարաբնույթ կարգավորումների ենթակա իրավահարաբերությունների համախումբ է, որտեղ, հանրային ծառայության հարաբերությունները կարգավորող ընդհանուր կանոններից բացի, օրենսդրին վերապահված է նաև հատուկ ոլորտային առանձնահատկությունների առումով հատուկ կարգավորումներ նախատեսելու իրավասությունը» (2023 թվականի նոյեմբերի 21-ի ՍԴՈ-1704 որոշում),

«Հանրային իշխանության իրականացումն ինչպես միանձնյա, այնպես էլ կոլեգիալ սկզբունքներով սահմանադրաիրավական պայման է, որն անմիջականորեն բխում է ՀՀ

Սահմանադրության անփոփոխելի 2-րդ հոդվածի իրավակարգավորումից և պայմանավորված է կառավարման ժողովրդավարական սկզբունքների շարունակական իրացման անհրաժեշտությամբ» (2021 թվականի հունիսի 10-ի ՍԴՈ-1598 որոշում):

20. Զարգացնելով մեջբերված դիրքորոշումները՝ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ հանրային ծառայությունը՝ որպես պետության կառուցակարգի գործառնական տարրորտ և բազմաբաղադրիչ համակարգ, բնականորեն չի կարող սպառիչ (*expressis verbis*) սահմանադրական ամրագրում ստանալ, քանզի մի կողմից՝ դա կհակասի Սահմանադրության՝ որպես բարձրագույն իրավաբանական ուժ ունեցող նորմատիվ իրավական ակտի, ինստիտուցիոնալ կառուցվածքի, նորմատիվ-իմաստային ծանրաբեռնվածության և առարկայական շրջանակի (*ratione materiae*) իրավաբանական և դոկտրինալ կանոններին, իսկ մյուս կողմից՝ զարգացող հասարակարգի և դրան համապատասխան՝ պետաիշխանական փոփոխվող գործառույթներով պայմանավորված՝ հանրային ծառայության համակարգի համարժեք նպատակադրման, խնդիրների ձևակերպման և դրանց լուծման կարիքների պատշաճ հասցեագրման կարողությունը, ելնելով Սահմանադրությամբ ամրագրված համապատասխան գործառույթներից, պատկանում է օրենսդիր և գործադիր իշխանությանը՝ որպես օրենսդրական գործընթացի սուբյեկտների և պետության քաղաքականության իրավաստեղծ և իրավակիրառ ուղղություններն ապահովող պետական ինստիտուտների համակցություն:

21. Վերոնշյալից բխում է նաև, որ հանրային ծառայությունը՝ որպես միասնական համակարգ և այդ համակարգում գործող ծառայությունները՝ որպես առանձին ենթահամակարգեր, ունեն, համապատասխանաբար, ընդհանուր և հատուկ նպատակներ ու խնդիրներ և վերջիններիս իրացման համար նախատեսված իրավակառուցակարգային համարժեք համալիր: Համապատասխանաբար, հանրային ծառայությունը՝ որպես պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում աշխատանքային գործունեություն, ենթարկվում է ընդհանուր և հատուկ իրավակարգավորման: Այլ կերպ՝ Սահմանադրությամբ և ընթացիկ օրենսդրությամբ սահմանված են հանրային ծառայության անցնելու ընդհանուր պահանջները, որոնք տարածվում են հանրային ծառայության բոլոր հավակնորդների վրա, ինչպես նաև հանրային ծառայության առանձին ենթահամակարգերի կամ տեսակների համար նախատեսված հատուկ չափանիշները, որոնք պայմանավորված են

հանրային ծառայության տվյալ տեսակի առջև դրված նպատակների և խնդիրների առավելագույնս արդյունավետ իրացման համար անհրաժեշտ գիտելիքների, աշխատանքային փորձի և հմտությունների հաշվառմամբ:

22. Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ նման տարբերակված մոտեցումն ինքնին չի խախտում հանրային ծառայության անցնելու սահմանադրական իրավունքը: Սույն մոտեցումը համահունչ է Սահմանադրական դատարանի նախորդիվ արտահայտած իրավական դիրքորոշումներին, որոնց համաձայն՝ «(...) Սահմանադրության 49-րդ հոդվածի ձևակերպումներից հետևում է, որ հանրային ծառայության անցնելու իրավունքը սահմանադրորեն երաշխավորված է միայն Հայաստանի Հանրապետության քաղաքացիների համար, այս իրավունքի իրականացման համար օրենսդիրը պարտավոր է ապահովել ընդհանուր հիմքեր՝ բացառելով որևէ խտրականություն» (2019 թվականի նոյեմբերի 15-ի ՍԴՈ-1488 որոշում):

23. «Մյուս կողմից՝ ընդհանուր հիմունքներով հանրային ծառայության անցնելու հիմնական իրավունքի իրականացման կառուցակարգերը կարող են էապես տարբերվել միմյանցից՝ կախված հանրային պաշտոնի առանձնահատկություններից և հանրային ծառայության տեսակից» (2019 թվականի նոյեմբերի 15-ի ՍԴՈ-1488 որոշում),

(...) «Սահմանադրության 49-րդ հոդվածով նախատեսված հանրային ծառայության անցնելու իրավունքի իրացման մանրամասների սահմանումը սահմանադրի կողմից վերապահվել է օրենսդրի հայեցողությանը: Այսինքն՝ հանրային ծառայության անցնելու, դրանում առաջխաղացման և այն դադարելու և դադարեցնելու պայմանները, հիմքերը և կարգը սահմանվում են օրենքով: Հետևաբար՝ հանրային ծառայության անցնելու իրավունքի ընթացակարգային կողմը լիովին վերապահված է օրենսդրի հայեցողությանը, որը, միաժամանակ, կաշկանդված է խտրականության սահմանադրական արգելքով հանրային ծառայության անցնելու (...) և հանրային ծառայությանը միջամտության (...) հիմքեր և պայմաններ սահմանելիս:

Միաժամանակ, Սահմանադրության 49-րդ հոդվածով օրենսդրին վերապահված ընդարձակ հայեցողության վերապահման նպատակը հանրային ծառայության պաշտոններում գործառույթների բազմազանության պայմանում այդ պաշտոններից յուրաքանչյուրի առանձնահատկություններին հանրային ծառայության անցնելու կառուցակարգերի

համապատասխանությունն ապահովելն է» (2021 թվականի հունիսի 10-ի ՍԴՈ-1598 որոշում):

24. Սահմանադրության և Օրենքի համադրված վերլուծությունից հետևում է, որ հանրային ծառայության անցնելու հավակնորդին առաջադրված ընդհանուր նորմատիվ պահանջներն են՝

Հայաստանի Հանրապետության քաղաքացի լինելը (Սահմանադրության 49-րդ հոդված),

դատական կարգով անգործունակ կամ սահմանափակ գործունակ ճանաչված չլինելը,

դատական կարգով հանրային ծառայության պաշտոն զբաղեցնելու իրավունքից զրկված չլինելը,

հանրային ծառայության տվյալ պաշտոնից բխող լիազորությունների իրականացմանը խոչընդոտող հիվանդությամբ չտառապելը,

հանցագործության համար սահմանված կարգով չմարված կամ չվերացված դատվածություն չունենալը,

պարտադիր զինվորական ծառայությունից խուսափած չլինելը (Օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մաս):

25. Միաժամանակ, Օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ պետական ծառայության առանձին տեսակները, ինչպես նաև համայնքային ծառայությունը կարգավորող Հայաստանի Հանրապետության օրենքներով կարող են սահմանվել նաև այլ պահանջներ:

26. Սահմանադրական դատարանը գտնում է, որ հանրային ծառայության անցնելու ընդհանուր պահանջները պայմանավորված են Սահմանադրության 1-ին հոդվածով սահմանված՝ Հայաստանի Հանրապետության պետաիրավական որակներին պետաիշխանական համակարգի համապատասխանության ելակետային նախադրյալների ապահովման սոցիալական բացարձակ անհրաժեշտությամբ (pressing social need): Նշյալ նախադրյալներն են՝ պետության հանդեպ հավատարմությունը (loyalty), պետության առջև դրված խնդիրների կատարման համար անհրաժեշտ բարեվարքությունը և հոգեֆիզիոլոգիական բավարար վիճակը:

27. Ամփոփելով՝ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ հանրային ծառայության անցնելու համար ընդհանուր պահանջների սահմանումը միտված է հանրային ծառայության՝ որպես պետության սահմանադրաիրավական գործառույթների իրացման ինստիտուցիոնալ համակարգի, գործառման իրավակարգության և արդյունավետության նվազագույն ընդհանուր չափանիշների ամրագրմանը, որոնք նաև կհանդիսանան հանրային ծառայության բոլոր տեսակների համար միասնական բնորոշ ընդհանուր ստանդարտ՝ նպաստելով հանրային ծառայության համակարգային ամբողջականությանը, ներդաշնակությանն ու ինստիտուցիոնալ կանխատեսելիությանը:

28. Ինչպես վերը նշվեց, հանրային ծառայության անցնելու ընդհանուր պահանջ-չափանիշներից զատ, հանրային ծառայության առանձին տեսակներում ծառայության անցնելու հավակնորդների համար օրենքով կարող են սահմանվել հատուկ պահանջներ: Վերջիններս հանրային ծառայության անցնելու ընդհանուր պահանջների նկատմամբ հանդես են գալիս որպես հատուկ նորմեր (*lex specialis*): Միևնույն ժամանակ, քանի որ հանրային ծառայությունը հանդիսանում է սահմանադրական ինստիտուտ, հանրային ծառայության անցնելու ընդհանուր պահանջներն ունեն հանրային ծառայության անցնելու իրավունքը կանոնակարգող սկզբունքի կարգավիճակ և անկախ ծառայության տեսակից պարտադիր են կատարման համար: Ըստ այդմ՝ յուրաքանչյուր հանրային ծառայողի նկատմամբ կիրառելի են իր ծառայությանը վերաբերելի և՛ ընդհանուր, և՛ հատուկ պահանջները:

29. Դատավորների նշանակմանը խոչընդոտող և սույն սահմանադրաիրավական վեճի առարկա հանդիսացող հիվանդությունների՝ դատավորի պաշտոնն զբաղեցնելու բացարձակ արգելք հանդիսանալու սահմանադրականությունն ստուգելուց առաջ Սահմանադրական դատարանը հարկ է համարում ամփոփ անդրադառնալ դատավոր նշանակվելու համար գործող հատուկ պահանջների շրջանակին:

30. Օրենսգրքի 97-րդ հոդվածը դատավորի պաշտոնի հավակնորդի համար սահմանել է հետևյալ պահանջները՝

- տարիքային շեմ (հավակնորդը պետք է լինի 25-ից 60 տարեկան),
- ընտրական իրավունքի առկայություն,
- միայն Հայաստանի Հանրապետության քաղաքացիության առկայություն,
- բարձրագույն իրավաբանական կրթություն,

- հայերենի տիրապետում,
- անգլերեն, ռուսերեն և ֆրանսերեն լեզուներից առնվազն մեկի իմացություն,
- միայն իրավագիտության բակալավրի աստիճան ունենալու կամ օտարերկրյա պե-

տությունում համապատասխան աստիճան ձեռք բերած լինելու դեպքում՝ առնվազն հինգ տարվա մասնագիտական աշխատանքի փորձառություն, իսկ իրավագիտության բակալավրի և իրավագիտության մագիստրոսի որակավորման աստիճան ունենալու կամ դիպլոմավորված մասնագետի բարձրագույն իրավաբանական կրթության որակավորման աստիճան ունենալու կամ օտարերկրյա պետությունում համապատասխան աստիճան ձեռք բերած լինելու դեպքում՝ առնվազն երեք տարվա մասնագիտական աշխատանքի փորձառություն,

- դատավոր նշանակվելու՝ Օրենսգրքով նախատեսված սահմանափակումների բացակայություն:

31. Ի լրումն դատավորի պաշտոնի թեկնածուին առաջադրվող նշյալ պահանջների՝ Օրենսգրքի 106-րդ հոդվածի 1-ին մասով և 111-րդ հոդվածի 1-ին մասով առանձին կարգավորումներ են նախատեսված գիտական կոչում և դասավանդման որոշակի փորձ, մասնագիտական աշխատանքի որոշակի փորձառություն ունեցող կամ նախկինում դատավոր աշխատած հավակնորդների համար (վերջին 10 տարվա ընթացքում մասնագիտական աշխատանքի առնվազն ութ տարվա փորձառություն կամ իրավագիտության բնագավառում գիտական աստիճան և վերջին 10 տարվա ընթացքում բարձրագույն ուսումնական հաստատությունում կամ դրան հավասարեցված հաստատությունում առնվազն հինգ տարվա դասավանդման փորձ կամ վերջին 10 տարվա ընթացքում առնվազն երեք տարի համապատասխան մասնագիտացման դատավորի, ինչպես նաև Սահմանադրական դատարանի, Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ գործող միջազգային դատարանի դատավորի, Բարձրագույն դատական խորհրդի անդամի պաշտոնում աշխատանքի փորձառություն):

32. Օրենսգրքի 112-րդ հոդվածը սահմանում է դատավոր նշանակվելու սահմանափակումները կամ նեգատիվ պահանջները, այդ թվում՝ առողջական վիճակի հիմքով պաշտոնի նշանակման և պաշտոնավարման արգելքը, որի շրջանակում ընդգրկված հիվանդությունների ցանկը սահմանված է Որոշման Հավելված N 1-ի վիճարկվող դրույթներով:

33. Նշյալ պահանջներից զատ, Օրենսգիրքը սահմանում է նաև վերադաս դատարաններում ընդգրկվելու հավակնություն ունեցող անձանց առաջադրվող պահանջները, որոնք կիրառվում են Օրենսգրքի 97-րդ հոդվածով նախատեսված՝ դատավորի թեկնածուի հավակնորդին առաջադրվող ընդհանուր պահանջների համակցությամբ, եթե վերադաս դատարաններին վերաբերող պահանջ-չափանիշներն այլ բան չեն նախատեսում (ընդհանուր և հատուկ իրավանորմերի հարաբերակցություն):

34. Սույն գործի հանգամանքներին Սահմանադրական դատարանը վերաբերելի է համարում Օրենսգրքի 123-րդ հոդվածի 6-րդ մասը, որի համաձայն՝ վերաքննիչ դատարաններում դատավոր նշանակվելու համար դատավորների առաջխաղացման ենթակա թեկնածուների ցուցակում կարող են ընդգրկվել՝

1) համապատասխան մասնագիտացման առաջին ատյանի դատարանի դատավորի պաշտոնում առնվազն երեք տարվա մասնագիտական աշխատանքի փորձառություն ունեցող դատավորը, որը չունի կարգապահական տույժ՝ նկատողության կամ խիստ նկատողության ձևով:

2) վերջին 10 տարվա ընթացքում պաշտոնավարած նախկին դատավորը, որն ունի դատավորի առնվազն հինգ տարվա փորձառություն:

3) այն անձը, որը՝

ա) ունի իրավագիտության բնագավառում գիտական աստիճան և վերջին ութ տարիների ընթացքում առնվազն վեց տարի բարձրագույն ուսումնական հաստատությունում դասավանդել է իրավունք կամ գիտական աշխատանք է կատարել գիտական հաստատությունում, կամ

բ) ունի վերջին 10 տարվա ընթացքում մասնագիտական աշխատանքի առնվազն 8 տարվա փորձառություն:

35. Վճռաբեկ դատարանի դատավորի թեկնածուի համար հատուկ պահանջներ են նախատեսված Սահմանադրությամբ՝ «mutatis mutandis», հաշվի առնելով նաև Օրենսգրքի 97-րդ հոդվածի 1-ին մասով ամրագրված ընդհանուր պահանջները:

36. Ի մասնավորի՝ Սահմանադրության 165-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Վճռաբեկ դատարանի դատավոր կարող է նշանակվել քառասուն տարին լրացած, միայն

Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող, ընտրական իրավունք ունեցող, բարձր մասնագիտական որակներով և մասնագիտական աշխատանքի առնվազն տասը տարվա փորձառությամբ, բարձրագույն կրթությամբ իրավաբանը:

37. Վճռաբեկ դատարանի դատավորին սահմանադրորեն առաջադրված հատուկ պահանջները մանրամասնվել և զարգացվել են Օրենսգրքի 132-րդ հոդվածում, որոնցից Սահմանադրական դատարանը սույն գործին վերաբերելի է համարում նշված հոդվածի 2-րդ մասով նախատեսված պահանջները:

Մասնավորապես՝ նշյալ օրինադրույթի համաձայն՝ Վճռաբեկ դատարանում դատավոր նշանակվելու համար առաջխաղացման ենթակա դատավորների թեկնածուների ցուցակում կարող են ընդգրկվել քառասուն տարին լրացած, միայն Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող, ընտրական իրավունք ունեցող, բարձր մասնագիտական որակներով՝

1) համապատասխան մասնագիտացման դատավորը, որն ունի առնվազն 10 տարվա մասնագիտական աշխատանքի փորձառություն, որից առնվազն հինգը՝ դատավորի փորձառություն.

2) վերջին 10 տարվա ընթացքում պաշտոնավարած նախկին դատավորը, որն ունի առնվազն 10 տարվա մասնագիտական աշխատանքի փորձառություն, որից առնվազն հինգը՝ դատավորի փորձառություն.

3) այն անձը, որը՝

ա) ունի իրավագիտության բնագավառում գիտական աստիճան և վերջին 10 տարիների ընթացքում առնվազն 8 տարի բարձրագույն ուսումնական հաստատությունում դասավանդել է իրավունք կամ գիտական աշխատանք է կատարել գիտական հաստատությունում, կամ

բ) ունի վերջին 12 տարվա ընթացքում մասնագիտական աշխատանքի առնվազն 10 տարվա փորձառություն:

38. Վերոշարադրյալի լույսի ներքո՝ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ դատավորի թեկնածուին առաջադրվող պահանջներն ունեն երկաստիճան բնույթ. դատավորի թեկնածուին առաջադրվող ընդհանուր պահանջներն ունեն ընդհանուր նորմի (lex generalis) կարգավիճակ, որոնք հաշվի առնելով՝ վերադաս դատարանների դատավորների թեկնածուների համար նախատեսված են առավել բարձր չափանիշներ (հատուկ

նորմեր՝ *lex specialis*)՝ հիմք ընդունելով վերադաս դատական ատյանների առջև դրված սահմանադրաիրավական խնդիրներն ու նպատակները և դրանց համահունչ իրացվող գործառույթները:

39. Միևնույն ժամանակ, Սահմանադրական դատարանը փաստում է, որ դատավորի թեկնածուի առողջական վիճակին վերաբերող պահանջները, մասնավորապես՝ դատավորի պաշտոնի հետ անհամատեղելի հիվանդությունների ցանկը, տարածվում են բոլոր ատյանների դատարանների դատավորների թեկնածուների վրա:

40. Անդրադառնալով Որոշման Հավելված N 1-ի 15 և 16-րդ կետերով սահմանված հիվանդությունների (վիճակների)՝ որպես դատավորի պաշտոնին նշանակվելու բացարձակ արգելքի, սահմանադրաչափությանը՝ Սահմանադրական դատարանը հարկ է համարում նշյալ հարցը պարզել՝ հիմք ընդունելով Սահմանադրության 78-րդ հոդվածով սահմանված՝ հիմնական իրավունքի սահմանափակման համաչափության թեստը:

41. Սահմանադրության 78-րդ հոդվածի համաձայն՝ հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակման համար ընտրված միջոցները պետք է պիտանի և անհրաժեշտ լինեն Սահմանադրությամբ սահմանված նպատակին հասնելու համար: Սահմանափակման համար ընտրված միջոցները պետք է համարժեք լինեն սահմանափակվող հիմնական իրավունքի և ազատության նշանակությանը:

42. Սահմանադրական դատարանը 2020 թվականի հունիսի 18-ի ՍԴՈ-1546 որոշմամբ անդրադարձել է համաչափության սահմանադրական սկզբունքին՝ նշելով հետևյալը. «(...) որևէ հիմնական իրավունքի սահմանափակում հնարավոր է միայն օրենքով, իսկ համաչափության սկզբունքով պայմանավորված՝ օրենքով հիմնական իրավունքի սահմանափակումներին վերաբերող պահանջները հետևյալն են.

1) սահմանափակման նպատակի լեգիտիմությունը, այն է՝ Սահմանադրությամբ սահմանված լինելը.

2) սահմանափակման համար ընտրված միջոցների՝

ա) պիտանիությունը՝ Սահմանադրությամբ սահմանված նպատակին հասնելու համար.

բ) անհրաժեշտությունը՝ Սահմանադրությամբ սահմանված նպատակին հասնելու համար.

գ) համարժեքությունը սահմանափակվող հիմնական իրավունքի և ազատության նշանակությանը:

(...)

(...) Սահմանադրական դատարանի գնահատմամբ համաչափության սկզբունքը Սահմանադրության 1-ին հոդվածում ամրագրված իրավական պետության հիմնարար սկզբունքի բաղադրիչներից մեկն է: 2015 թվականի փոփոխություններով (գործող) Սահմանադրության մեջ այն ամրագրվել է ամբողջ ծավալով՝ հստակորեն (*expressis verbis*):

Համաչափության սկզբունքի էությունը մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակումների սահմանափակումն է մասնավոր և հանրային շահերի միջև ողջամիտ հավասարակշռության ապահովման միջոցով, և հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակումներին ներկայացվող սահմանադրական պահանջների շարքում այն ունի առանձնահատուկ կարևորություն:

Համաչափության սկզբունքի առաջին տարրը հիմնական իրավունքի սահմանափակման նպատակի լեգիտիմությունն է, այն է՝ Սահմանադրությամբ նախատեսված լինելը: Դա նշանակում է, որ օրենսդիրը, իրականացնելով հիմնական իրավունքի սահմանափակման իր լիազորությունը, պետք է հիմնվի Սահմանադրությամբ նախատեսված նպատակների վրա: Բոլոր այն դեպքերում, երբ այդ նպատակներն ուղղակիորեն ամրագրված են սահմանափակվող հիմնական իրավունքին կամ ազատությանը վերաբերող սահմանադրական դրույթներում, ինչպես օրինակ՝ մասնավոր կյանքի անձեռնմխելիության հիմնական իրավունքի դեպքում, օրենսդիրն իրավասու է միայն դրանք կոնկրետացնել օրենքներում, մնացյալ դեպքերում օրենսդիրն ինքն է բացահայտում սահմանափակման՝ օրենքով սահմանված նպատակի սահմանադրական բովանդակությունը՝ հիմնվելով Սահմանադրության վերաբերելի նորմերի մեկնաբանության վրա:

Հավաստիանալով իր կողմից պարզված սահմանադրական նպատակի առկայության մեջ՝ օրենսդիրն այնուհետև պետք է ընտրի դրան հասնելու միջոցները: Հետևապես, ընտրված միջոցների սահմանադրականությունը կանխորոշվում է առաջին հերթին դրանցով հետապնդվող նպատակով:

Ինչ վերաբերում է օրենսդրի կողմից միջոցների ընտրությանը՝ սահմանադրորեն արդարացված նպատակին հասնելու համար, ապա, նախ՝ դրանք պետք է պիտանի լինեն

հիշյալ սահմանադրական նպատակին հասնելու համար: Այսինքն՝ այնպիսի օրենսդրական միջոցներն են պիտանի, որոնցով օրենսդիրն ի զորու է հասնել հետապնդվող նպատակին, այլ կերպ՝ երբ ապահովված է հավանականությունը, որ արդյունքը, որին ձգտում է օրենսդիրը, ի հայտ կգա:

Համաչափության սկզբունքի հաջորդ տարրն օրենսդրի կողմից ընտրված միջոցի անհրաժեշտությունն է, այսինքն՝ այն, որ այդ միջոցը՝ այլ միջոցների համեմատ նույն ներգործությամբ, պետք է ենթադրի ամենամեղմ միջամտությունը որևէ հիմնական իրավունքին կամ ազատությանը: Սահմանադրությամբ սահմանված նպատակին հասնելու բոլոր պիտանի միջոցներից պետք է ընտրվի այն օրենսդրական միջոցը, որը նպատակին հասնելու նույն հավանականությամբ, այսինքն՝ նույն արդյունավետությամբ, սակայն առավել մեղմ է սահմանափակում որևէ հիմնական իրավունք կամ ազատություն:

Համաչափության սկզբունքի վերջին՝ չորրորդ տարրը պահանջում է, որ օրենսդիրն իր կողմից ընտրված պիտանի և անհրաժեշտ միջոցը համեմատի սահմանափակվող հիմնական իրավունքի կամ ազատության սահմանադրական նշանակության հետ՝ պարզելու համար, որ այդ միջոցներով արդյունքում պետությունն իրապես հասնում է հետապնդվող նպատակին, և սահմանափակվող հիմնական իրավունքը կամ ազատությունն իր նշանակությամբ չի պահպանում իր գերակայությունը այն հանրային շահերի նկատմամբ, որոնք պահպանելու նպատակով էլ օրենսդիրը դիմում է հիմնական իրավունքի կամ ազատության սահմանափակման: Վերջնարդյունքում դա նշանակում է, որ որևէ հիմնական իրավունքի կամ ազատությանը չմիջամտելը կամ այն երաշխավորելը, կախված դրանց էությունից, կանոն է, իսկ դրա սահմանափակումը՝ բացառություն, որը պետք է հիմնավորվի սահմանափակման յուրաքանչյուր դեպքում: Ընդսմին, որքան ավելի ինտենսիվ է սահմանափակումը, այնքան ավելի է մեծանում սահմանափակումը հիմնավորելու բեռը»:

43. 2025 թվականի ապրիլի 1-ի ՍԴՈ-1775 որոշմամբ Սահմանադրական դատարանն արձանագրել է, որ «(...) համաչափության սահմանադրական սկզբունքը մի շարք փոխկապակցված նորմատիվ տարրերի համակցություն է, որոնց միաժամանակյա ապահովման դեպքում է հիմնական իրավունքին պետության միջամտությունը սահմանադրաչափ»:

44. Սահմանադրական դատարանը, նախ՝ հարկ է համարում պարզել, թե որն է այն սահմանադրաչափ նպատակը, որը հետապնդվել է վիճարկվող Որոշման Հավելված N 1-ի 15 և 16-րդ կետերով՝ սահմանելով երկու ականջի կայուն լրիվ խլությունը կամ

խուլհամրությունն ու երկու աչքերի (բինոկուլյար) կուրությունը՝ որպես դատավորի պաշտոնի ստանձնումը բացառող հիվանդություններ (վիճակներ):

45. Այդ նպատակը բացահայտելուց առաջ Սահմանադրական դատարանը հարկ է համարում անդրադառնալ Կառավարության կողմից՝ դատավորի պաշտոնի ստանձնմանը խոչընդոտող հիվանդությունների ցանկի սահմանման լիազորության սահմանադրաչափության վերհանմանը:

46. Օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը սահմանում է հանրային ծառայության անցնելու ընդհանուր պահանջ՝ ծառայությանը խոչընդոտող հիվանդությամբ չտառապելը՝ առանց որոշակիացնելու հիվանդությունների ցանկը՝ ըստ ծառայության տեսակների: Օրենքի 14-րդ հոդվածի 3-րդ մասով ամրագրված է, որ նույն հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով նախատեսված հիվանդությունների ցանկը հաստատում է Կառավարությունը՝ հաշվի առնելով հանրային ծառայության տվյալ տեսակի առանձնահատկությունները: Իր հերթին, Օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով վերահաստատվել է դատավորի մասով առողջական խնդիրների պատճառով հանրային ծառայության անցնելու արգելքը, իսկ արդեն 2-րդ մասով կոնկրետ հիվանդությունների ցանկի սահմանումը պատվիրակվել է Կառավարությունը:

47. Ըստ այդմ՝ օրենսդիրը, գնահատելով օրենսդրական մակարդակում նման մանրազնին կանոնակարգման օբյեկտիվ անհնարինությունը և դրա՝ ենթաօրենսդրական կարգավորման առարկա լինելու հանգամանքը, ըստ էության, հարցը թողել է գործադիր իշխանության կարգավորմանը, ինչը համահունչ է Սահմանադրության 6-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներին: Համապատասխանաբար, Կառավարությունը, իրացնելով ենթաօրենսդրական ակտեր ընդունելու իր սահմանադրական լիազորությունը, Որոշմամբ սահմանել է դատավորի պաշտոնն ստանձնելուն խոչընդոտող հիվանդությունների ցանկը:

48. Այսպիսով, Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ դատավորի պաշտոնին նշանակվելուն խոչընդոտող հիվանդությունների ցանկը Կառավարության որոշմամբ սահմանելն ինքնին սահմանադրաչափ է:

49. Անդրադառնալով քննարկվող իրավակարգավորումների հետապնդած նպատակի սահմանադրաչափությանը՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ առողջա-

կան վիճակով պայմանավորված՝ աշխատանքային (ծառայողական) սահմանափակումներն ինքնին սահմանադրականության խնդիր չեն հարուցում այնքանով, որքանով հետապնդում են տվյալ պաշտոնով (հաստիքով) նախատեսված գործառույթները պատշաճ և արդյունավետ կատարելու նպատակ: Վերջինս առավել ակնառու է հանրային ծառայության պարագայում, որն ուղղված է հանրային իշխանության մարմինների սահմանադրաիրավական գործառույթների իրացմանը: Այլ կերպ, **inter alia**, հանրային ծառայության արհեստավարժությունից և արդյունավետությունից է կախված, ընդհանրապես, Սահմանադրության 1-ին անփոփոխ հոդվածով սահմանված որակներին համապատասխանող պետության գործառման արդյունավետությունն ու կայունությունը:

50. Այլ հավասար պայմանների դեպքում հիվանդությունը կամ հիվանդագին վիճակը կարող է հանգեցնել ծառայողական պարտականությունների կատարման անհաղթահարելի դժվարությունների՝ վտանգելով տվյալ պետաիշխանական գործառույթի պատշաճ և արդյունավետ իրացումը:

51. Սույն համատեքստում Սահմանադրական դատարանը նկատում է, որ հանրային ծառայության անցնելու՝ Սահմանադրությամբ երաշխավորված իրավունքի իրացմանն ուղղված այլ իրավական ակտերով սահմանված պահանջները պետք է լինեն ողջամիտ և չհանգեցնեն հանրային ծառայության անցնելու իրավունքի էության խախտման:

52. Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում ընդգծել, որ դատական իշխանության առանձնահատուկ դերը կարևորելով՝ օրենսդիրը դատարանակազմության ընդհանուր չափորոշիչների շարքում սահմանափակումներ նախատեսելիս պետք է դրսևորի հատուկ զգուշավորություն՝ ապահովելու համար դատական իշխանության արդյունավետությունը և բացառելու համար հանրային ծառայության սահմանադրական իրավունքին անհամաչափ միջամտությունը:

53. Սույնի լույսի ներքո՝ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ դատական իշխանության պարագայում վերջինիս սահմանադրական գործառույթներն ու դրանցից բխող լիազորությունները պահանջում են մասնագիտական հատուկ գիտելիքներ, բարձր իրավագիտակցություն և հոգեֆիզիոլոգիական կարողունակություն, որոնք թույլ կտան իրավական և փաստական լուծում գտնել ամենատարբեր գործերի և իրավական վեճերի համար՝ հաղթահարելով այլևայլ արտաքին ազդեցություններ, կանխելով

գործի քննության ընթացքում դատավարության մասնակիցների ոչ իրավաչափ վարքագիծը և, ընդհանուր առմամբ, բավարարելով արդար դատաքննության հանդեպ հանրության մոտ ձևավորված իրավաչափ ակնկալիքը:

54. Առանձնակի անդրադառնալով դատավորի թեկնածուի հոգեֆիզիոլոգիական կարողունակության գնահատման չափանիշներին՝ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ յուրաքանչյուր դեպքում այդ չափանիշների առկայության փաստմամբ, ընդհանուր առմամբ, պետք է հաստատագրվի դատավորի սոցիալական ինտեգրման և սոցիալական հարմարեցման կարողությունը:

55. Հետևապես՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ Որոշման Հավելված N 1-ի 15 և 16-րդ կետերով դատավորի թեկնածուի հիմնական ֆիզիկական կարողություններին պահանջների առաջադրումը միտված է դատավորի՝ որպես արդարադատություն իրականացող բարձրաստիճան պաշտոնատար անձի, պետաիշխանական լիազորությունների պատշաճ և արդյունավետ իրացումն օբյեկտիվորեն և անդառնալիորեն խոչընդոտող երևույթների՝ հիվանդությունների և (կամ) հիվանդագին վիճակների բացառմանը և, ըստ այդմ, հետապնդում է սահմանադրաչափ նպատակ:

56. Սահմանադրական դատարանը գտնում է, որ այնքանով, որքանով երկու ականջի կայուն լրիվ խլություն կամ խուլիամրությունն ու երկու աչքերի (բինոկուլյար) կուրությունն էականորեն կոժվարացնեն, իսկ առանց հատուկ տեխնիկական միջոցների օգտագործման՝ նման առողջական խնդիրներ ունեցող անձի համար ընդհուպ անհնարին կդարձնեն դատավորի գործառույթների կատարումը՝ այդպիսով կասկածի տակ դնելով դատարանի՝ որպես արդարադատություն իրականացնելու բացառիկ գործառույթ իրականացնող սահմանադրական ինստիտուտի, արդյունավետությունը, և որպես հետևանք՝ անձի՝ Սահմանադրության 61-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված արդյունավետ դատական պաշտպանության իրավունքի իրացման ապահովման պետության պոզիտիվ պարտականությունը, Որոշման Հավելված N 1-ի 15 և 16-րդ կետերով նշյալ հիվանդություններով (վիճակներով) տառապող անձանց՝ դատավորի պաշտոնում նշանակվելու արգելքը պիտանի է այդ արգելքի սահմանմամբ հետապնդվող սահմանադրաչափ նպատակին հասնելու համար:

57. Սույն համատեքստում Սահմանադրական դատարանն ուշադրություն է հրավիրում այն հանգամանքի վրա, որ մի շարք պետություններում նույնպես գործում է դատավորի պաշտոնում նշանակվելու նմանատիպ արգելք (Լեհաստան, Սլովենիա, և այլն¹):

58. Որոշման Հավելված N 1-ի 15 և 16-րդ կետերով նախատեսված հիվանդությունների (վիճակների)² որպես դատավորի պաշտոնում նշանակվելու բացարձակ արգելքի սահմանման անհրաժեշտության մասով Սահմանադրական դատարանը հարկ է համարում նշել հետևյալը:

59. Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում ուշադրություն հրավիրել այն հանգամանքի վրա, որ Կառավարության մեկ այլ՝ 2019 թվականի փետրվարի 15-ի թիվ 98-Ն որոշմամբ, հիմք ընդունելով Օրենքի 14-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված՝ հանրային ծառայությանը խոչընդոտող հիվանդություններով տառապելու դեպքում հանրային ծառայությանն անցնելու արգելքը, սահմանվել է հանրային ծառայության բոլոր տեսակների դեպքում ծառայության անցնելը խոչընդոտող հիվանդությունների (վիճակների) ընդհանուր ցանկ, որոնցով տառապելու դեպքում անձը, ընդհանրապես, չի կարող հավակնել հանրային ծառայության: Այդ հիվանդություններն են՝ օրգանական (ներառյալ սիմպտոմատիկ) հոգեկան խանգարումները, շիզոֆրենիան, շիզոտիպային և զառանցանքային խանգարումները, տրամադրության (աֆեկտիվ) խանգարումները, սովորույթի և հակումների խանգարումները, մտավոր հետամնացությունը, հոգեկան և վարքային խանգարումները՝ հոգեակտիվ նյութերի գործածման հետևանքով, շնչառական օրգանների տուբերկուլոզ՝ հաստատված մանրէաբանորեն կամ հյուսվածքաբանորեն:

60. Հիվանդությունների մեջբերված ցանկը, ինչպես վերը նշվեց, հանրային ծառայության անցնելու ընդհանուր արգելք է՝ անկախ հանրային ծառայության կոնկրետ տեսակից: Հետևապես՝ Սահմանադրական դատարանը վիճարկվող իրավադրույթների անհրաժեշտությունը կգնահատի նշյալ հիվանդությունների համատեքստում՝ պարզելու համար, թե որքանով է ժողովրդավարական հասարակությունում անհրաժեշտ Կառավարության՝ 2019 թվականի փետրվարի 15-ի թիվ 98-Ն որոշմամբ հաստատված հիվանդությունների

¹ Տե՛ս Վարչական դատարանների դատավորների ընտրության և նշանակման ընթացակարգերի համեմատական վերլուծություն (Сравнительный анализ процедур отбора и назначения судей административных судов), Ստրասբուրգ, 2023, էջեր 23, 41: <https://rm.coe.int/comparative-study-on-selection-of-judges-rus/1680a59e56>,

ցանկում չներառված՝ երկու ականջի կայուն լրիվ խլության կամ խուլիամրության ու երկու աչքերի (բինոկուլյար) կուրության նախատեսումը որպես դատավորի պաշտոնում նշանակվելու բացարձակ արգելք: Այլ կերպ՝ գործառության ի՞նչ առանձնահատկություններ ունի դատավորի աշխատանքը, որոնք Որոշման Հավելված N 1-ի վիճարկվող դրույթներով սահմանված հիվանդությունները (վիճակները) բացարձակ արգելքի ձևով անհամատեղելի են դատավորի աշխատանքի հետ, մինչդեռ կարող են համատեղելի լինել հանրային ծառայության մի շարք այլ տեսակների հետ:

61. Սահմանադրության 162-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում արդարադատությունն իրականացնում են միայն դատարանները՝ Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան:

62. Սահմանադրության 164-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ արդարադատություն իրականացնելիս դատավորն անկախ է, անաչառ և գործում է միայն Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան:

63. Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք:

64. Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք:

65. Սահմանադրության վերոնշյալ իրավադրույթներից հետևում է, որ արդարադատությունը պետական իշխանության եռաթև համակարգի բաղադրիչներից մեկի՝ դատական իշխանության կողմից իրականացվող մասնագիտական գործունեություն է, որն ուղղված է անձի խախտված իրավունքների վերականգնմանն ու պաշտպանությանը՝ իրավական վեճերի լուծման հատուկ դատավարական կառուցակարգերով և ընթացակարգերով:

66. Դատարանի գործառույթներն իրականացնում է միանձնյա դատավորը կամ կոլեգիալ դատական կազմը: Ընդ որում՝ առաջին ատյանի դատարանում գործերը քննվում են որպես կանոն միանձնյա՝ բանավոր եղանակով և մրցակցային ընթացակարգով, իսկ

վերաքննիչ և Վճռաբեկ դատարաններում՝ մեծ մասամբ առանց դատական նիստ հրավիրելու (համապատասխանաբար՝ առանց դատավարության սուբյեկտների ֆիզիկական ներգրավման) և կոլեգիալ:

67. Նշյալից հետևում է, որ արդարադատությունը՝ որպես դատական իշխանության բացառիկ գործառույթ, իրականացվում է հատուկ դատավարական ընթացակարգերով՝ բանավոր կամ գրավոր կարգով՝ միանձնյա դատավորի կամ դատական կազմի կողմից: Ըստ այդմ՝ դատավորը՝ որպես հանրային ծառայող, ունի աշխատանքային առանձնահատուկ գործառույթներ և դրանց իրացմանն առաջադրվող հատուկ պահանջներ՝ իրավաբանական կրթություն, անկախություն, անաչառություն, առաջին ատյանի դատարանի դատավորի պարագայում՝ միանձնյա դատական նիստ վարելու կարողություն, որը ներառում է դատական նիստի բնականոն կարգն ապահովելը, կողմերի դատավարական գործողությունների օրինականությունը երաշխավորելը, ինչպես նաև, ընդհանրապես, իր քննությանը ենթակա գործերով գործավարությունը համակարգելը և այլն:

68. Բացի դրանից, ի տարբերություն հանրային ծառայության այլ տեսակների՝ դատավորի գործառույթները փուլային հաջորդականությամբ մանրամասնորեն շարադրված են դատավարական օրենսգրքերով և Օրենսգրքով, իսկ բարեվարքության և գույքային հաշվետվողականության հարցերը՝ Օրենսգրքով, «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքով և այլ նորմատիվ իրավական ակտերով: Այսինքն՝ դատավորի պաշտոնեական գործառույթները և հարակից պարտականությունները կազմում են դատավորի պաշտոնի բազմաբաղադրիչ նկարագիրը, որին դատավորն իր մասնագիտական և ֆիզիկական կարողություններով պետք է համապատասխանի: Վերոնշյալ լույսի ներքո՝ անհրաժեշտ է բացահայտել՝ արդյո՞ք Որոշման Հավելված N 1-ով սահմանված հիվանդություններով (վիճակներով) տառապող դատավորն իրականում ունակ չէ կատարելու իր ծառայողական պարտականությունները՝ ներառյալ օժանդակ տեխնիկական միջոցների գործադրմամբ:

69. Սահմանադրական դատարանը կարևոր է համարում արձանագրել, որ դատավորի պաշտոնեական և անձնական որակներին, պարտականություններին և սահմանափակումներին անդրադարձ է կատարվել միջազգային տարբեր հեղինակավոր իրավական ակտերում: Մասնավորապես՝ Եվրոպական դատավորների խորհրդակցական խոր-

հրդի՝ 2002 թվականի նոյեմբերի 19-ի թիվ 3 կարծիքով (այսուհետ նաև՝ Կարծիք) ընդգծվում է, որ «դատավորները լիազորված են գործել այն ոլորտներում, որոնք ուղղակիորեն առնչվում են մարդկանց կյանքի կառուցվածքին» (կետ 11): Ըստ Կարծիքի՝ «(...) ժողովրդավարական հասարակություններում հանրային պահանջը դատական իշխանությունից աճում է:

70. Դատավորների լիազորությունները նրանց տրվել են ժողովրդի կամքով և ենթակա են նաև միջազգային իրավունքի և արդարության սկզբունքներին, որոնք ճանաչված են ժամանակակից ժողովրդավարական հասարակություններում:

71. Դատավորների լիազորություններն ուղղված են արդարադատության իրականացմանը (...) և յուրաքանչյուր մարդու իրավունքների (...) ապահովմանը (...)» (12 և 13-րդ կետեր):

72. Կարծիքի հետագա շարադրանքում ընդգծվում են դատավորի անկախության, անաչառության, շահերի բախման անթույլատրելիության, քաղաքական զսպվածության, բարեվարքության և դատավորի օրինակելի վարքագծի այլ սկզբունքներ:

73. Միևնույն ժամանակ, Սահմանադրության 57-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված՝ անձի՝ աշխատանք ընտրելու ազատության իրավունքը և 29-րդ հոդվածով նախատեսված խտրականության արգելքի սկզբունքը ենթադրում են հանրային ծառայության անցնելու իրավունքի ներառականություն և այդ ուղղությամբ արդյունավետ կառուցակարգեր և ընթացակարգեր սահմանելու՝ պետության պոզիտիվ պարտականություն՝ Սահմանադրության 75-րդ հոդվածի պահանջներին համապատասխան: Սույն իրավական մոտեցումը տեղ է գտել նաև «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» միջազգային դաշնագրում, որի 2-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝

«1. Սույն դաշնագրի մասնակից յուրաքանչյուր պետություն պարտավորվում է հարգել իր տարածքի սահմաններում և իրավազորության տակ գտնվող բոլոր անձանց այն իրավունքները, որոնք ճանաչվել են սույն դաշնագրում, և ապահովել դրանք առանց որևէ տարբերության, այն է՝ ռասայի, մաշկի գույնի, սեռի, կրոնի, քաղաքական կամ այլ համոզմունքների, ազգային կամ սոցիալական ծագման, գույքային վիճակի, ծննդի կամ այլ հանգամանքի կապակցությամբ:

2. Եթե դա արդեն չի նախատեսված գոյություն ունեցող օրենսդրական կամ այլ միջոցներով, սույն դաշնագրի մասնակից յուրաքանչյուր պետություն պարտավորվում է իր

սահմանադրական ընթացակարգերին և սույն դաշնագրի դրույթներին համապատասխան անհրաժեշտ միջոցառումներ իրականացնել այնպիսի օրենսդրական կամ այլ միջոցներ ձեռնարկելու համար, որոնք անհրաժեշտ կլինեն սույն դաշնագրում ճանաչվող իրավունքների իրականացման համար»:

74. Դաշնագրի թիվ 25 ընդհանուր մեկնաբանությամբ սահմանվում է, որ հանրային ծառայության մատչելիությունը հավասար հիմունքներով երաշխավորելու տեսանկյունից հանրային ծառայության անցնելու, առաջընթացի, դադարեցման համար սահմանված չափորոշիչներն ու ընթացակարգերը պետք է լինեն օբյեկտիվ և խելամիտ: Ավելին՝ համապատասխան դեպքերում կարող են ձեռնարկվել պոզիտիվ միջոցներ՝ ապահովելու բոլոր քաղաքացիների համար հանրային ծառայության մատչելիությունը հավասար հիմունքներով (մաս 4, 23):

75. Ըստ նույն մեկնաբանության՝ հանրային ծառայության անցնելու իրավունքը հիմնվում է նաև արժանիքահենության ընդհանուր սկզբունքի վրա՝ ապահովելու համար հանրային ծառայության՝ քաղաքական ազդեցությունից, միջամտություններից ու ճնշումներից զերծ լինելը (նույն տեղում):

76. «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» կոնվենցիայի 27-րդ հոդվածի 1-ին մասի «ա» և «բ» կետերի համաձայն՝ մասնակից պետությունները ճանաչում են հաշմանդամություն ունեցող անձանց՝ մյուսների հետ հավասար հիմունքներով աշխատանքի իրավունքը. սա ներառում է ապրուստի միջոցներ վաստակելու իրավունքը աշխատանքի միջոցով, որը նա ձեռք է բերում իր ազատ ընտրության ու համաձայնության պայմաններում, ինչպես նաև աշխատուժի շուկայում և հաշմանդամություն ունեցող անձի համար բաց, ընդգրկում ու մատչելի աշխատանքային միջավայրում: Մասնակից պետությունները պաշտպանում են աշխատանքի իրավունքը և նպաստում դրա կիրառմանը, ի թիվս այն անձանց, որոնք հաշմանդամություն են ձեռք բերել աշխատանքի ընթացքում, և անհրաժեշտ քայլեր են ձեռնարկում նաև օրենսդրության միջոցով, որպեսզի, մասնավորապես.

ա) արգելեն խտրականությունը հաշմանդամության պատճառով՝ կապված բոլոր այն հարցերին, որոնք վերաբերում են զբաղվածության տարբեր տեսակներին, ներառյալ

աշխատուժի հավաքագրման, վարձակալության ու աշխատանքի ընդունման պայմանները, զբաղվածության շարունակականությունը, աշխատանքային առաջընթաց ունենալը և անվտանգ ու առողջ աշխատանքային պայմանները:

բ) պաշտպանեն հաշմանդամություն ունեցող անձանց՝ մյուսների հետ հավասար հիմունքներով աշխատանքի արդար ու բարենպաստ պայմաններ ունենալու իրավունքները, ներառյալ՝ միևնույն աշխատանքի հավասար հնարավորություններ և հավասար վարձատրություն, անվտանգ ու առողջ աշխատանքային պայմաններ, այդ թվում՝ պաշտպանություն ոտնձգություններից և վնասի փոխհատուցում:

77. Վերոնշյալի լույսի ներքո՝ Սահմանադրական դատարանը եզրահանգում է, որ դատավորի պաշտոնում նշանակման գործընթացում հատվում են հանրային բնույթի երկու շահեր՝ իրավաչափ, արհեստավարժ և արդյունավետ արդարադատության իրականացումն ու դատավորի պաշտոնին հավակնելու իրավունքի ներառականության անհրաժեշտությունն այն առումով, որ դատավորի պաշտոնի թեկնածուին առաջադրվող կրթական, աշխատանքային փորձի և բարեվարքության չափանիշներին համապատասխանող յուրաքանչյուր անձ հնարավորություն պետք է ունենա մասնակցելու և հաղթելու դատավորի թափուր պաշտոնի համար մրցույթում՝ հնարավորինս նվազեցնելով առողջական խնդիրների պատճառով մրցույթին չթույլատրելու իրավական հիմքերը:

78. Սահմանադրական դատարանը կարևորում է նշյալ զուգամիտվող շահերը և գտնում է, որ սույն դիմումի շրջանակում իրականացվող վերացական վերահսկողության առարկա սահմանադրաիրավական վեճը ենթակա է լուծման մրցակցող շահերի հավասարակշռման հիման վրա: Այլ կերպ՝ մատչելի և արժանիքահեն հանրային ծառայությունը ենթադրում է որոշում կայացնող սուբյեկտների կողմից պաշտոնի հավակնորդի կրթական, մասնագիտական և բարեվարքության որակների առաջնահերթ արժևորումը՝ ողջամտության և համարժեքության շրջանակում նվազեցնելով առողջական պատճառների վկայակոչումը որպես հանրային ծառայության բացարձակ արգելքներ:

79. Սահմանադրական դատարանի սույն գնահատականը համահունչ է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային պրակտիկային: Մասնավորապես՝ Եվրոպական դատարանը հաշմանդամություն ունեցող անձանց հավասար հնարավորությունների հարցը դիտարկել է ողջամիտ հարմարեցումների հայեցակարգի համատեքստում: Եվրոպական դատարանը նշել է, որ ՄԻԵԿ 14-րդ հոդվածով սահմանված

խտրականության արգելքը հաշմանդամություն ունեցող անձանց մասով ընկալվում է որպես անհրաժեշտ և համարժեք փոփոխություն և հարմարեցում, որոնք յուրաքանչյուր դեպքում չեն առաջացնում անհամաչափ ծանրաբեռնվածություն և այդպիսով հաշմանդամների իրավաչափ ակնկալիքի բավարարում առ այն, որ իրենք այլոց հետ հավասար հիմունքներով կօգտվեն բոլոր իրավունքներից և հիմնարար ազատություններից: Եվրոպական դատարանը գտել է, որ ողջամիտ հարմարեցումն օգնում է շտկել այն փաստացի անհավասարությունը, որն արդարացված չէ և հանգեցնում է խտրականության (Չամն ընդդեմ Թուրքիայի գործով (Çam v. Turkey) 2016 թվականի մայիսի 23-ի վճիռ, 65-րդ կետ):

80. Եվրոպական դատարանի պրակտիկային համահունչ և ղեկավարվելով Սահմանադրության 81-րդ հոդվածով՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ ողջամիտ հարմարեցումների վերաբերյալ Եվրոպական դատարանի հայեցակարգային մոտեցումների կիրարկումը պետության պոզիտիվ պարտականությունն է, որը կարող է իրագործվել, եթե դատավորի պաշտոնի հավակնորդի կարողություններին տրվի ոչ թե բացարձակ, այլ դատավորի պաշտոնական գործառույթների պատշաճ կատարման անհրաժեշտության շրջանակից բխող հարաբերական գնահատական՝ այդպիսով քննարկվող հիվանդություններով (վիճակներով) տառապող անձին ողջամիտ հարմարեցումների զուգորդմամբ հնարավորություն տալով հավակնելու և նշանակվելու դատավորի պաշտոնում և նման կերպ հաղթահարելու մասնագիտական աշխատանքի բնական (դատավորի պաշտոնի հավակնորդի կամքից անկախ առաջացած) խոչընդոտը:

81. Սահմանադրական դատարանն արձանագրում է նաև, որ կուրությամբ, խլությամբ կամ համրությամբ տառապող անձանց մի շարք երկրներում տրամադրվում է դատավորի պաշտոնին հավակնելու իրավական հնարավորություն: Այդ երկրներից են ԱՄՆ-ն, Իտալիան, Գերմանիան, Մեծ Բրիտանիան և այլն²:

² Տե՛ս «Եվրոպայում դատավորների և դատախազների նշանակումը, գնահատումը և կարիերան», հետազոտության համակարգող և խմբագիր» **դի Ֆեդերիկո Ջ.** (Recruitment, professional evaluation and career of judges and prosecutors in Europe: research coordinated and edited by: Giuseppe di Federico) էջեր 69-127, 127-159:

<https://www.amij.org.mx/asambleas/4/antecedentes/mesa%20capacitacion%20judicial/CareerOfJudges.pdf>

Դորֆման Դ. «Կույր արդարադատության պարադոքսը. տեսանելի արատներով դատավորները և անաշխատունակության մետաֆորը» (Dorfman D., The Blind Justice Paradox: Judges with Visual Impairments and the Disability Metaphor), (2016), հատոր 5, հրատարակություն 2, էջեր 286-288:

<https://law.stanford.edu/wp-content/uploads/2017/03/The-Blind-Justice-Paradox.pdf>

Մասնավորապես՝ ԱՄՆ փորձի ուսումնասիրությունը փաստում է, որ, օրինակ՝ կուրությամբ տառապող անձանց հնարավորություն է տրվում զբաղեցնելու դատավորի պաշտոնը, իսկ պաշտոնավարելիս կուրություն ձեռք բերելու դեպքում այն պաշտոնավարման դադարեցման հիմք չի հանդիսանում: Ընդ որում՝ կուրությամբ տառապող դատավորների պաշտոնեական գործառույթների պատշաճ և արդյունավետ կատարման համար գործում է խելամիտ հարմարեցումների տեխնիկական երաշխիքների մի ամբողջ համակարգ՝ դատավորին աջակցող օժանդակ անձնակազմ, բրալյան գրեր, ձայնագրառող սարքեր, համակարգչից օգտվելը դյուրացնող ծրագրեր և այլն³:

82. Վերոշարադրյալն ի միտն ունենալով՝ Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում պատասխանել այն հարցին, թե արդյոք Որոշման Հավելված N 1-ի վիճարկվող 15 և 16-րդ կետերով նախատեսված՝ երկու ականջի կայուն լրիվ խլություն կամ խուլհամրությունն ու երկու աչքերի (բինոկուլյար) կուրությունը՝ որպես դատավորի պաշտոնի ստանձնումը բացառող հիվանդություններ (վիճակներ) սահմանելն այն պայմաններում, երբ Կառավարության մեկ այլ՝ 2019 թվականի փետրվարի 15-ի թիվ 98-Ն որոշմամբ հանրային ծառայության անցնելը բացառող հիվանդությունների ընդհանուր ցանկում նշյալ հիվանդությունները (վիճակները) սահմանված չեն, հանդիսանում է հետապնդվող սահմանադրաչափ նպատակին հասնելու համար անհրաժեշտ (միակ կամ առավել մեղմ) միջոց:

83. Սահմանադրական դատարանը նկատի է առնում այն հանգամանքը, որ հանրային ծառայության անցնելու առողջական ընդհանուր արգելքների շարքում հիմնականում ներառված են հոգեկան հիվանդություններն ու խանգարումները, ինչպես նաև մեկ սուր վարակիչ հիվանդություն: Այսինքն՝ ընդհանուր մոտեցումն այն է, որ հանրային ծառայության որևէ պաշտոնի հավակնելուն ընդունակ չէ հոգեկան սուր խնդիրներ ունեցող կամ շնչառական օրգանների տուբերկուլյոզով տառապող անձը: Մնացյալ լուրջ հիվանդությունների պարագայում կարող է որդեգրվել անհատական մոտեցում՝ ելնելով տվյալ

³ Տե՛ս **Թեյթլ Դ.Ս.** Տեսլական. հուշագրություն կուրության և արդարադատության մասին, 2024թ., գլուխներ 13-18, **Մոթլ Ա.** «Ինչու է հաշմանդամության բազմազանությունը կարևոր դատական համակարգում», «Բիզնես իրավունքն այսօր», Ամերիկյան իրավաբանների ասոցիացիա, 2022թ.:

ծառայության առանձնահատկություններից և դրանց համապատասխանող աշխատանքային գործառույթներից:

84. Վերոնշյալի լույսի ներքո՝ Սահմանադրական դատարանն իր համաձայնությունն է հայտնում Պատասխանողի բացատրությունում տեղ գտած դիրքորոշմանն առ այն, որ քննարկվող հիվանդությունների (վիճակների)՝ դատավորի պաշտոնի ստանձնման և պաշտոնավարման հետ համատեղելիությունը ներառման, արդարադատության մատչելիության և ողջամիտ հարմարեցումների անհրաժեշտության հետ մեկտեղ պետք է գնահատվի նաև դատավորի պաշտոնից բխող գործառույթներն արդյունավետ կատարելու հավակնորդի կարողությամբ՝ այն տեսլականով, որ չխախտվի դատական պաշտպանության հայցմամբ դիմած անձի արդար դատաքննության իրավունքը:

Սահմանադրական դատարանն ի գիտություն է ընդունում նաև Պատասխանողի մատնանշած դատավարական և աշխատանքային ռիսկերը, որոնք կարող են առաջանալ *a priori* քննարկվող հիվանդություններով (վիճակներով) տառապող անձանց կողմից դատավորի կարգավիճակում պաշտոնավարելու դեպքում: Սակայն տեխնիկական հարմարեցումների բացակայության պատճառով սահմանադրական նորմը չի կարող չիրացվել, այլ հակառակը՝ նորմի գոյությունը պետությանը պարտավորեցնում է ստեղծել դրա իրացման արդյունավետ մեխանիզմներ և ընթացակարգեր՝ հիմք ընդունելով Սահմանադրության 75-րդ հոդվածի պահանջները:

85. Միննույն ժամանակ, Սահմանադրական դատարանը գտնում է, որ Որոշման Հավելված N 1-ի 15 և 16-րդ կետերով սահմանված, ինչպես նաև ցանկացած հիվանդության (վիճակի)՝ դատավորի գործառույթների իրացումը խոչընդոտելու հնարավորությունը գնահատելիս անհրաժեշտ է ղեկավարվել դատական յուրաքանչյուր ատյանի սահմանադրաիրավական գործառույթների և տվյալ հիվանդությամբ (վիճակով) դատավորի պաշտոնի հավակնություն ունեցող անձի համար առաջացող սահմանափակումների շրջանակի համադրման մեթոդով՝ պարզելու համար, թե արդյոք տվյալ հիվանդությունը (վիճակը) համատեղելի է դատավորի գործառույթների հետ՝ հաշվի առնելով ֆիզիկական սահմանափակումներ ունեցող անձանց աշխատանքային պայմանների ողջամիտ հարմարեցման ուղղությամբ պետության պոզիտիվ պարտականությունը:

Ըստ այդմ՝ Սահմանադրական դատարանը հարկ է համարում դատավորի պաշտոնի հետ Որոշման Հավելված N 1-ի 15 և 16-րդ կետերով նախատեսված հիվանդությունների

(վիճակների) համատեղելիության հարցին մոտենալ՝ տարբերակելով դատական ատյանների գործառությանին առանձնահատկությունները, որոնցով պայմանավորված՝ նշյալ ֆիզիկական-ֆիզիոլոգիական խնդիրներով անձանց՝ դատավորի պաշտոնում նշանակմամբ առաջացող ռիսկերն ունեն տարբեր ծավալներ, իսկ խելամիտ հարմարեցումների պատշաճ և լիարժեք կիրառմամբ կարող են չեզոքանալ, որպիսի հանգամանքներին Պատասխանողը չի անդրադարձել:

86. Սույն դիրքորոշման հիմքում Սահմանադրական դատարանը դնում է այն հանգամանքը, որ դատավորի պաշտոնում նշանակվելու կարևորագույն հատկանիշը հավակնորդի անձնային և մասնագիտական որակների համակցությունն է, որը ներառում է նաև նրա անձնական և մասնագիտական բարեվարքությունը: Այս ամենը կազմում է հավակնորդի մարդաբանական էությունը: Համապատասխանաբար՝ նշյալ հատկանիշներով պետք է գնահատվի հավակնորդի համապատասխանությունը դատավորի պաշտոնին, որից հետո միայն հավասարակշռվեն դատավորի գործառույթների կատարման համար ֆիզիկական-ֆիզիոլոգիական խոչընդոտները:

87. Մասնավորապես՝ Սահմանադրական դատարանը հաշվի է առնում առաջին ատյանի դատարանի դատավորի գործառույթների հետևյալ առանձնահատկությունները, որոնք ենթակա են մանրագնին վերլուծության՝ երկու ականջի կայուն լրիվ խլության կամ խուլիամրության ու երկու աչքերի (քինոկուլյար) կուրության հետ դրանց համատեղելիությունը որոշելու (հաստատելու կամ բացառելու) համար: Դրանք են՝ դատական նիստերի միանձնյա վարումը, կողմերի հետ անմիջական հաղորդակցումը և դրանցից աժանցվող՝ տեղում կայացվող արձանագրային (բանավոր) որոշումների կայացումը, ինչպես նաև ապացույցները դատական նիստում անմիջականորեն հետազոտելը (այդ թվում՝ այնպիսի ապացույցներ, որոնք կարող են հետազոտվել բացառապես տեսողական և (կամ) լսողական գործառույթների իրացմամբ), կողմերին և դատավարության մյուս մասնակիցներին գործին վերաբերող հարցեր տալը, պատասխաններն արագ ընկալելը և դատավարական համարժեք գործողություններ կատարելը և այլն:

88. Սահմանադրական դատարանը հարկ է համարում հավելել, որ առաջին ատյանի դատարանը «փաստի» դատարան է, որտեղ գործը քննվում է ըստ էության և ողջ ծավալով, ինչը պայմանավորում է ապացուցման գործընթացի բազմադրվագությունը, ընթացքում ծագող օբյեկտիվ դժվարությունները և որպես հետևանք՝ դատավորի լրջագույն և

տարողորտ ծանրաբեռնվածությունը՝ հաշվի առնելով նաև դատական վարույթների տատեսականներից յուրաքանչյուրի առանձնահատկությունները:

89. Միևնույն ժամանակ, Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ անկախ դատավարության տեսակից՝ առաջին ատյանի դատարանում քննվող գործերով ապացույցների հետազոտման գործընթացում դատավորի անմիջական և բազմակողմանի մասնակցությունն անհրաժեշտություն և էական հանգամանք է, որի համատեքստում դատավորի սոցիալական շփումը դատավարության մասնակիցների հետ ստանում է լուրջ բովանդակություն՝ պահանջելով հաղորդակցման համարժեք կարողություն:

90. Բացի դրանից, Սահմանադրական դատարանը նկատում է, որ արդարադատության մատչելիությունը և, միևնույն ժամանակ, «տեսանելիությունը» ենթադրում են բանավոր դատաքննությանը դատավորի մասնակցությանն առաջադրվող այնպիսի որակական չափանիշներ, ինչպիսիք են՝ ինքնավստահությունը, արդարադատություն գործադրելու անձնային կարողությունը, ինչը միանձնյա դատավորի կողմից իրականացվող բանավոր դատաքննության պարագայում գործընթացի ողջ ծանրությունը դնում է մեկ անձի վրա՝ նրա առողջական վիճակի բարվոքությունից բարձրացնելով դատավարության մասնակիցների և հանրության լեգիտիմ ակնկալիքի շեմը:

91. Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ վերաքննիչ և Վճռաբեկ դատարաններում դատական նիստերը գերազանցապես կազմակերպվում են՝ առանց դատական նիստ հրավիրելու և, հետևաբար՝ մեծ մասամբ բացակայում է կողմերի հետ անմիջականորեն շփվելու և դատական նիստի կարգը միանձնյա ապահովելու անհրաժեշտությունը: Փոխարենը՝ վերաքննիչ և Վճռաբեկ դատարաններում դատավորի պաշտոնի հավակնորդից ակնկալվող հիմնական աշխատանքային հմտությունը դատական ակտիվ առաջադրվող պահանջների ապահովումն է:

92. Այս կապակցությամբ Սահմանադրական դատարանը կարևորում է Որոշման Հավելված N 1-ի վիճարկվող 15 և 16-րդ կետերով նախատեսված հիվանդություններից (վիճակներից) տառապող անձանց համապատասխանության չափանիշների մանրամասն ստուգումը, քանզի խնդրո առարկա հիվանդությունների (վիճակների) առկայությունը կարող է հաղթահարվել միայն բացառիկ բարձր կրթական և մտավոր կարողություններով ու նախընթաց աշխատանքային (այդ թվում՝ գիտական աշխատանքի) փորձառությամբ:

Հակառակ պարագայում հանրային ծառայության սահմանադրական իրավունքի սոցիալական ներառականությունն ապահովելով հանդերձ՝ կվտանգվի պաշտպանության ենթակա մյուս սահմանադրաչափ շահը՝ պատշաճ և արդյունավետ դատական քննությունը՝ առաջ բերելով դատական իշխանության իրավասության և կարողունակության նկատմամբ հանրային վստահության անկում:

Բոլոր դեպքերում, Որոշման Հավելված N 1-ի վիճարկվող դրույթներում նշված հիվանդություններով (վիճակներով) տառապող հավակնորդի վերաբերյալ որոշման կայացումը պահանջում է անհատականացված մոտեցում և յուրաքանչյուր դեպքի հատուկ գնահատում՝ մերժելով հաշմանդամության վրա հիմնված ընդհանրական բացառությունները:

93. Ամփոփելով վերոգրյալը՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ երկու ականջի կայուն լրիվ խլությամբ կամ խուլիամրությամբ ու երկու աչքերի (բինոկուլյար) կուրությամբ տառապող անձանց համար դատավորի պաշտոնում նշանակվելու բացարձակ արգելքի սահմանումը հետապնդվող սահմանադրաչափ նպատակին հասնելու համար անհրաժեշտ միջոց չէ: Հետևապես՝ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ Որոշման Հավելված N 1-ի 15 և 16-րդ կետերով սահմանված՝ հանրային ծառայության անցնելու սահմանադրական իրավունքին կատարվող միջամտությունը չի համապատասխանում Սահմանադրության 78-րդ հոդվածով նախատեսված համաչափության սկզբունքին:

94. Միաժամանակ, Սահմանադրական դատարանն արժևորում է Սահմանադրության 4-րդ հոդվածով սահմանված՝ իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքով պայմանավորված՝ իրավասու մարմինների գործառության ինքնուրույնությունը և այդ համատեքստում Սահմանադրական դատարանի վերոնշյալ դիրքորոշումների լույսի ներքո՝ սահմանադրաչափ է համարում վերոքննարկյալ հիվանդություններով (վիճակներով) տառապող հավակնորդների նկատմամբ անհատական մոտեցում սահմանելիս ողջամիտ հայեցողության դրսևորման իրավագործությունը:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 167-րդ հոդվածի 1-ին մասով, 168-րդ հոդվածի 1-ին կետով, 169-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետով, 170-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով, ինչպես նաև «Սահմանադրական

դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 68-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց** .

1. Հայաստանի Հանրապետության կառավարության՝ 2019 թվականի մայիսի 30-ի «Դատավորի պաշտոնում նշանակմանը խոչընդոտող ֆիզիկական արատների և հիվանդությունների ցանկը, դատավորի պաշտոնում նշանակմանը խոչընդոտող ֆիզիկական արատների և հիվանդությունների բացակայության մասին տրամադրվող տեղեկանքի ձևը, դատավորի պաշտոնում նշանակմանը խոչընդոտող ֆիզիկական արատների և հիվանդությունների բացակայության մասին տեղեկանք տրամադրելու կարգը սահմանելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի հոկտեմբերի 11-ի N 1184-Ն որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 685-Ն որոշման Հավելված N 1-ի 15 և 16-րդ կետերն այնքանով, որքանով դրանցով սահմանվում է երկու ականջի կայուն լրիվ խլությամբ կամ խուլիամրությամբ ու երկու աչքերի (բինոսկուլյար) կուրությամբ տառապող անձանց համար դատավորի պաշտոնում նշանակվելու բացարձակ արգելք՝ ճանաչել Սահմանադրության 49 և 75-րդ հոդվածին հակասող և անվավեր:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ



Ա. ԴԻԼԱՆՅԱՆ

16 սեպտեմբերի 2025 թվականի
ՍԴՈ-1796